Սերգեյ Դովլաթով

Նոր բնակարանի ճանապարհին

Վճիտ ու արևոտ կեսօրին բեռնատար մեքենան կանգնեց:

Չկալովի փողոցի աղյուսաշեն տան մոտ: Վարորդը, շուրջբոլորը նայելով, ծխախոտ հանեց: Մոտ վազեց մի ջահել կին ու վրա-վրա, մեղավոր-մեղավոր ինչ-որ բան ասաց:
– Արագացրե՛ք,- կտրեց վարորդը:
– Ընդամենը երեք րոպե:
Կինը անհետացավ շքամուտքում:
Ոչ հեռվում տերևների արանքից սևին էր տալիս բարձրահասակ արձանը: Պատվանդանի տակ մանուշակագույն աղավնիների իրարանցում էր:
Կինը վերադարձավ, այս անգամ՝ ճամպրուկով:
– Արդեն բերում են:
Առջևից, հսկա, քարացած հողով լի կաթսան ձեռքին, քայլում էր ռեժիսոր Մալինովսկին: Դեմքը թույլ առկայծում էր ֆիկուսի թավուտներում:
Ռեժիսորը հոգնել էր:
Արծնապատ կաթսան երկու սանդղաշար քաշ էր տվել առաջ պարզած ձեռքերին: Հետո գրկեց, սեղմեց կրծքին: Ավելի ուշ՝ փորին: Վերջապես, թաղվելով սաղարթի մեջ, Մալինովսկին նրբագեղ մտմտաց.
«Մեկին մեկ՝ Քրիստոսը Գեթսեմանի այգում»:
Նրա ետևից երկու տղամարդ մեծ եռանդով քաշ էին տալիս պահարանը: Ղեկավարում էր քառասնամյա, թխահեր, լվանալուց մաշված սպայական գիմնաստյորկայով մայոր Կուզմենկոն: Ուսանող Գենա Լոսիկը անխոս ենթարկվում էր նրա ցուցումներին.

– Իջացրո՛ւ: Իջացրո՛ւ՝ ասում եմ: Հիմա՝ գնացինք: Ասում եմ՝ գնացի՛նք: Կամա՛ց: Վա՛խ, ոտքս: Ըհը, կողքա՛նց, կողքա՛նց: Մի քիչ ձախ: Կողքա՛նց: Կանգնի՛…
Պահարանը սանդղահարթակից լայն էր: Հրաշքով հանեցին: Մայորը աչքով արեց Լոսիկին ու ասաց.
– «Չես ուզում՝ կստիպենք» սկզբունքն է:
Փոքր-քիչ խորհրդավոր էր արտահայտվում:
Վարորդն առանց հետ դառնալու նայեց լուսավոր կլոր հայելու մեջ:
– Հլա որ դրեք էդտեղ,- ասաց նա:
Տղամարդիկ, բեռը մայթին թողնելով, անհետացան շքամուտքում:
Բարձրահասակ երիտասարդ կինը հրաժեշտ էր տալիս դռնապանուհուն:
Վարորդը թերթ էր կարդում…
Մալինովսկին, ձախ ձեռքը հետ գցած, քաշ էր տալիս ճամպրուկը: Լոսիկի բաժինը աշնանային վերարկուով փաթաթած նկարների կապն էր: Մայոր Կուզմենկոն թոկով կապկպեց ռադիոլայի տուփը, որի մեջ ամանեղեն էր, ձեռքն առավ երկնագույն լուսամփոփով լամպը ու թեթևոտն սլացավ ներքև:
Ոչ հաճախ ու հաճույքով ֆիզիկական աշխատանք կատարելիս մայոր թեթևակի ու հուզիչ գրգռվածություն էր ունենում, ինչպես մարզադաշտում: Բանակային կյանքի քսան տարիները նրան տարրական, բայց միանշանակ պատկերացումների էին վարժեցրել. օրինակ, որ առնականությունը ֆիզիկական կատարելությունն է: Այսինքն՝ միշտ պետք է պատրաստ լինել պատերազմի, սիրո կամ աշխատանքի, որը կատարելու ես կրքով, հումորով ու բարեհոգությամբ:
Նրանք ծանոթացել էին ապրիլին: Վարյան այն ժամանակ ընդամենը երազում էր նոր բնակարանի մասին: Ապրում էր նախկին «ծառայանոցում»: Միակ պատուհանը բացվում էր դեպի խոհանոց: Խոհանոցը լի էր ճենճահոտով, կովշտոցով ու ճաշի հոտերով: Կուզմենկոն հստակ հիշում էր ամեն ինչ…
Տրամվայում գեղեցիկ կին չես տեսնի: Տաքսու կիսախավարում, ցիտրուսային նստիքին հետ ընկած են սուրում, երկարոտն ու անհոգի. և ամենուրեք սպասում են նրանց: Իսկ ցեխոտ գուլպաներով գեշոներին տրամվայի ծովն է օրորում: Ու հետն էլ ապակիները զզվելի զնգզնգում են:
Մայոր Կուզմենկոն կանգնած էր՝ ձեռքը բռնածողին: Աշխարհը ծուռտիկ անդրադառնում էր նիկելած մետաղից: Անսպասելիորեն այդ փոքրիկ, փոփոխական քառսում մայորը մի այնպիսի բան տեսավ, որը ստիպեց կկոցել

աչքերը: Միաժամանակ՝ դիմաներկի հոտ առավ: Կուզմենկոն հոգնած բարության արտահայտություն տվեց դեմքին: Հետո կռացավ ու ասաց.
– Մենք կարծես ինչ-որ տեղ հանդիպե՞լ ենք:
Չնայած կինը չշրջվեց, Կուզմենկոն գիտեր, որ հաջող է գործում: Այդպես լավ հրաձիգը, կրակագծում պառկած և առանց թիրախը տեսնելու, զգում է՝ կպա՛:
Կանգառում իջնելիս օգնեց Վալյային: Եվ այդ ժամանակ մի ուրախ շփոթմունք պատահեց. աղջկա թևատակին սեղմված հովանոցը մշտեց մայորի փորը:
– Շքեղ հովանոց է,- ասաց նա,- հաստատ՝ արտասահմանյան:
– Հա՛… Այսինքն՝ չէ… Լոձում եմ առել:
– Պարզ է,- ասաց Կուզմենկոն, ում քիչ էր վիճակվել Պերգոլովյան ցատկահարթակից այն կողմ գնալ:
– Քսան գլոտի եմ տվել:
– Քսա՛ն,- տաք-տաք վրդովվեց Կուզմենկոն:- Չեխերը լրիվ խիղճը կորցրել են:
– Եթե մի բան դուրը գալիս է, փող չեմ խնայում:
Կուզմենկոն անհապաղ հավանության շարժում արեց՝ ի գնահատումն աղջկա խիզախության ու լայնախոհության:
Գարեջրի կրպակը շրջանցելով՝ հատեցին անկյունադարձը:
– Ռաշը պեպսի-կոլա,- ասաց մայորը:
Կուզմենկոն Վարյայի սենյակում արագ շուրջը նայեց: Կարճլիկ կահույք, գրքեր, Հեմինգուեյի նկարը:
«Հեմինգուեյին գիտեմ»,- գոհունակությամբ մտածեց մայորը:
Աջից՝ ջրաներկ նկար: Աշտարակն ուր որ է կփլվի: Ինչ-որ տեղ տեսել է մայորը: Աշակերտական տարիների աղջամուղջում էր առկայծել՝ ֆիզիկայի օրենքներին կից: Հիշվում էր նույնիսկ աշտարակի անունը՝ փոքր-ինչ անպարկեշտ երանգով: Եվ աշտարակը պահում է, թույլ չի տալիս ընկնի՝ մի սովորական գրչածայր, բնական չափի մի հավի փետուր: (Ամբողջ նկարը ձեռքի ափից մեծ չէր):
Առեղծվածային խորհրդանիշերը զարմացրին մայորին:
«Իսկապե՞ս փետուր է»:
Ուշադիր նայեց. իրոք փետուր էր:
– Բառնաբելի,- այդ պահին թիկունքից ասաց կինը:
Կուզմենկոն գունատվեց ու ցնցվեց:
«Կթողեմ կգնամ,- մտածեց նա,- գրողի ծոցը… Լո՛ձ… Բառնաբե՛լի… Էս ի՞նչ աբստրակցիոնիզմ է…»:

– Կոստյա Բառնաբելիի ստեղծագործությունն է,- ասաց կինը:- Մեր նկարիչներից է, վրացի…
Նա կողքանց դուրս եկավ վարագույրի հետևից:
Մայորի ուղեղում հստակ ուրվագծվեց մի հեռավոր բառ՝ «պենյուար»:
– Վրացիք տաղանդավոր ազգ են,- ասաց նա:
Հետո ընդառաջ գնաց՝ եռանդուն, ինչպես զորահանդեսին:
– Դուք Ակուտագավա սիրո՞ւմ եք,- վերջին բանն էր, որ լսեց մայորը:

Վերա Զվյագինայի երկնագույն օրագրից
«Գիտե՞ս, արդյոք, իմ ժամանակակի՛ց, որ շաբաթվա օրերն իրարից տարբերվում են գույնով: Այդ առավոտն ինձ վառ կարմիր էր թվում՝ հակառակ անձրևի կտրուկ ալեգրոյի, որը խախտում էր կեսօրի մինորային սիմֆոնիան: Տուն դառնալիս մի կանչող, պահանջկոտ հոգեհոսանք զգացի: Ձդիմացա ու բարկացկոտ նայեցի վեր: Իմ առջև մի անծանոթ էր հառնել՝ լայնաթիկունք, կոպիտ քամահար դեմքով:
– Զրանկար եք, անծանոթուհի՛:
Նկարի՞չ է: Ապշած էի: Ենթագիտակցությանս մեջ մի միտք թրթռաց. ինչ անսպասելի են զուգորդվում մարմնական կոպտությունն ու նրբին հոգին: Հատկապես արվեստի մարդկանց մեջ: (Մարտին Իդեն, Ակսյոնով): Հասկանալի է, հրաժարվեցի բնորդել նրան, բայց՝ նրբանկատորեն, որպեսզի իքսն ինձ պահպանողական չհամարեր: Մերկ մարմինը միայն փչացած մարդու մեջ է կեղտոտ զուգորդումներ արթնացնում:
– Ընդամենը սիրող նկարիչ եմ,- ասաց անծանոթը,- իսկ ընդհանրապես՝ զինվոր եմ: Այո՛, այո՛, սովորական զինվոր՝ մայորի աստիճանով: Որը սակավ ազատ ժամերին նկարակալի առջև մոռանում է առօրյա հոգսերը… Ընդամենը սիրող եմ,- տխուր կրկնեց նա:
– Արվեստը տիտղոսներ ու աստիճաններ չի ճանաչում,- ջերմորեն առարկեցի ես:- Մենք բոլորս Ապոլոնի խոնարհ ծառաներն ենք, նրա անծայրածիր տերության բնակիչները:
Մի ուրիշ հայացքով նայեց: Իսկ երբ իջանք տրամվայից, հարցրեց.
– Որտեղի՞ց եք գնել այս չքնաղ հովանոցը:
Ես տվեցի եվրոպական երկրներից մեկի ազդեցիկ ֆիրմայի անունը:
Ամբողջ խոսակցությունը ենթատեքստով էր:

Անծանոթը մեղմ դիպավ արմունկիս: Նրա կոպտավուն դեմքին արտահայտվում էր զգայական ուժը: Որոշ հակիրճ արտահայտություններ մատնում էին բարքերի սրատես կենցաղագրին: Երբ ցրված ուղեկիցս անցավ անգլերենի, պարզվեց՝ անբասիր առոգանություն ունի: Նրա կողքին ինձ փխրուն ու պարմանի էի զգում: Եթե մեզ տեսներ Զիգմունդ Ֆրեյդը, կցնծա՞ր:
Շեմին անծանոթը բաց ու ազնիվ նայեց աչքերիս: Առանց կեղծ բարեպաշտության նշույլի ժպտացի ի պատասխան: Քաղքենիների չարագուշակ քրթմնջոցի ուղեկցությամբ մտանք սենյակ:
Երկու ըմպանակ ֆրանսիական գինին առավել մտերմացրեց մեզ: Ահագնացած զգացմունքը նոր զոհեր էր պահանջում: Անծանոթը քաղաքավարի գրկեց ուսերս: Ես երկչոտ հպվեցի նրան:
Կատարվեց այն, ինչից ամենաշատն էի վախենում…»:

Տեղափոխվելու նախօրեին Վարյան զանգեց տասներկու տղամարդկանց: Առաջինը եկավ Կուզմենկոն:
– Մի քանի օր առաջ ընկերուհուդ տեսա,- ասաց նա:- Է՞ն , էլի… Ինչ էր անո՞ւնը… Էն… Մի քիչ ներվային…
– Հա՛, Ֆաինկան… Հունիսից երեսունհինգ ռուբլի է պարտք: Չասե՞ց, երբ կտա…
– Չի ասել:
– Տես, է՛, լրբին:
– Տրոլեյբուսից տեսա,- ասաց Կուզմենկոն:
– Թեյ կխմե՞ս:
– Կնախընտրեի օղին: Բայց էդ՝ հետո:
– Բա ո՛նց,- ասաց Վարյան:- Դրա փողը պահել եմ:
– Փողը խնդիր չի,- ասաց մայորը:
Շուտով եկավ Մալինովսկին ու հպանցիկ բարևելով՝ մի պատահական գիրք բացեց:
Տղամարդիկ իրենց սառն ու անտարբեր էին պահում, չափազանց անտարբեր, մնալով ինչ-որ տեղ՝ անտարբերության ու թշնամանքի արանքում, անտարբեր ու անդրդվելի, չափազանց անտարբեր ու անդրդվելի, ինչպես խարդախը առերեսման ժամանակ:
Վարյան իջեցրեց նկարները: Հյուրերը տեսան, որ պաստառները խունացել են ու պատված են պորտվեյնի բծերով:

Միջանցքից լսվեց դռան զանգի ձայնը: Վարյան շտապեց հարևաններից շուտ բացել:
Հայտնվեց Լոսիկն ու կանգնեց շեմին:
– Թեյ կխմե՞ս,- հարցրեց Վարյան:
– Նախաճաշել եմ,- պատասխանեց Լոսիկը,- ազնիվ խոսք:
«Մեզնից ի՞նչ ենք ներկայացնում,- մտածում էր Մալինովսկին:- Ովքե՞ր ենք: Հավաքածո՞ւ: Հերբարիո՞ւմ: Ինչո՞ւ ենք այստեղ: Ինչո՞ւ եմ այս աղմկոտ հեգեմոնի կողքին: Ի՞նչ ընդհանուր բան ունեմ թանաքոտ մատներով այս տղեկի հետ»:

Նա նստել էր բուտաֆորական բազկաթոռում ու Մարինա Յակովլևային ասում էր.
– Դու հերոսուհի ես, հասկանո՞ւմ ես: Քեզ վրա են կենտրոնացած ներկայացման բոլոր գլխավոր հույզերը: Ես պիտի ցանկանամ քեզ, հասկանո՞ւմ ես: Ների՛ր, Մարի՛նա, ես քեզ չեմ ցանկանում:
– Պա՜հ,- ասաց Յակովլևան,- շատ էլ պետքս ես…
Նրա ամուսինն աշխատում էր մշակույթի վարչությունում:
– Դու ինձ նեղ կենցաղային իմաստով հասկացար: Վերացարկված էի ասում:
Ու Մալինովսկին ձեռքերն անորոշ պտտեց ազդրերի շուրջը:
«Սիրուն կնիկ է,- մտածում էր ռեժիսորը,- ինչպիսի՜ լանդշաֆտ: Բայց ի՞նչ օգուտ: Կյանք չկա մեջը, ոնց որ վերմիշել լինի: Ափսո՜ս: Կրակ չկա մեջը, կրա՜կ: Ներկայացումը փուլ է գալիս…»:
Նրա թիկունքին հառնում էին աղյուսաշեն պատերը: Գլխավերևում թույլ լուսավորված ճախարակներն էին: Ձախից առկայծում էր վահանակի կարմիր լամպը: Հետնաբեմի ցուրտ աղջամուղջը տագնապ էր ներշնչում:
– Ֆոլքներ կարդացե՞լ ես:
Գլխի ծույլ շարժում:
– Մի տեսակ հավատս չի գալիս: Լավ, ինչ որ է: Ֆոլքներն ասում էր՝ ցանկացած շարժում արտահայտում է մարդու յուրահատուկ փորձը: Եվ նրա մեջ, թե հերոսուհին ինչպես է ծխում, ինչպես է շտկում փեշը, ապրում են անցյալը, ներկան ու հստակ գուշակվում է ապագան: Ենթադրենք՝ անցնում եմ փողոցով…
– Տեսե՜ք-տեսեք, ի՜նչ իրադարձություն է,- քմծիծաղեց Յակովլևան:
– Ապո՜ւշ,- գոռաց ռեժիսորը:

Մալինովսկին դեգերում էր թոկերի, նրբատախտակե վահանակների արանքում՝ հետևում թողնելով հումորով ու ծուլությամբ լեցուն լռությունը:
Դերասանական տոհմի ժառանգ լինելով՝ մանկուց էր հետնաբեմից հետևում թատրոնին: Սիրեց թատրոնի դարձերեսը, բայց դրա փոխարեն՝ ընդմիշտ ատեց կյանքի բեմական կողմը: Ընդմիշտ զզվանքով լցվեց կեղծիքի հանդեպ: Իբրև անհաջողակ ինքնասպան, իբրև արտիստ:
– Մի վշտացեք,- լսեց Մալինովսկին ու հասկացավ, որ խոսում է երկնագույն խալաթով շիկահեր կնոջ հետ:- Նրանք դեռ կգոչան…
Մալինովսկու հոգում խլրտաց ընդվզումը:
– Մի՞թե չեն հասկանում, որ արտիստը դոնոր է, արյունատու, որը նվիրաբերում է իրեն՝ փոխհատուցում չպահանջելով…
– Երկրորդ կազմի՞ց եք,- հետաքրքրվեց Մալինովսկին:
– Դիմահարդար եմ:
– Պետք է նայել… Բացառիկ կառուցվածք ունեք:
– Կառուցվա՞ծք:
– Արտաքին տեսքը…
Մալինովսկին կոճկեց բաճկոնն ու Վարյային տվեց անձրևանոցը:
Նրանք դուրս եկան թատրոնից: Անձրևաշղարշի միջով դեղնին էին տալիս տրամվայների լույսերը:
– Արվեստագետը պիտի լիովին տրվի,- ասում էր Վարյան:
Ու նորից հոգնած բողոք արթնացավ ռեժիսորի հոգու ծանծաղուտում:
– Հասանք,- ասաց Վարյան:
«Գարշելի՛ է… Կեղծի՛ք…»,- մտածեց Մալինովսկին: Ու նույն պահին էլ ներեց ներկա ու գալիք տարիների իր բոլոր մեղքերը:
Շխկաց անջատիչը: Քանի՛ անգամ էր այդ ամենը տեսել: Պճնամոլ ջարդոնի լեռներ: Ալկոհոլային հուշանվերների զորաբանակներ: Կրոնական պաշտամունքի անգրագետ ընտրված պարագաներ: Բարբարոս գեղանկարչություն: Ջարդրտված կլավեսիններ: Գրոշանոց ճենապակի: Սրբապատկերների կտորտանք՝ կինոդերասանների լուսանկարների հարևանությամբ: Մեջընդմե՛ջ: Նիկոլա-սուրբը, Սավելիյ Կրամարովը… Գողական փղձուկ՝ կիթառի նվագակցությամբ… Գարշա՛նք… Սո՛ւտ…
«Այս ամենը երբևէ վերջ կունենա՞»,- մտածեց ռեժիսորը:
– Ի՞նչ ենք խմելու,- հարցրեց Վարյան:

– Վալիդոլ,- անժպիտ պատասխանեց Մալինովսկին:
– Թեյ կդնեմ:
«Ուզում է դերասանուհի դառնա,- մտածեց ռեժիսորը,- հոգսի տակ եմ ընկնելու: Չե՛մ անի… Ի՜նչ զզվելի ձայն ունի: Ռեժիսորը գիշերում է դիմահարդարի մոտ…»:
Սակայն տագնապի բարալիկ ծուխը կրկին հալվեց նրա հոգնության ու թախծի լայնարձակության մեջ:
Վարյան բացեց դուռը: Մալինովսկին, մեղավոր նայելով, կոշիկներն էր հանում:
– Ոչ մի խոսք,- ասաց նա,- քոմ ցու միր…

Վերա Զվյագինայի երկնագույն օրագրից
«Ա՜խ, եթե գիտենանայիր, իմ ժամանակակի՛ց, ինչ է զգում արարիչը՝ իրենից հետ, հեռվում թողնելով պահպանողական դարաշրջանը: Նրա գաղափարները ջախջախվում են՝ խփվելով լռության ցուրտ պատին: Տխմարները մատով են ցույց տալիս նրան: Կանայք անհաջողակ են համարում:
Ո՞ւր է նա, ում չհանդիպեց Մայակովսկին: Ո՞ւր է նա, որ կարող էր բռնել Դանտեսի սառցեղեն ձեռքը: Ո՞ւր է նա, որը կջերմացներ պորուչիկ Լերմոնտովի խռովարար սիրտը:
Երեկ վերջապես խոսեցի Արկադի Մ.-ի հետ: Փորձ էր անում Մարինա Յա.-ի հետ: Հպանցիկ հղումներ ռուս և արտասահմանյան դասականներին… Արտահայտիչ ռեժիսորական իմպրովիզացիաներ… Մեղմ, քաղաքավարի դիտողություններ… Ամեն ինչ իզուր էր: Ապուշ Յա.-ն միայն մի գլուխ կոպտում էր: (Ասում են ամուսինն ինչ-ինչ մարմիններում է աշխատում): Վերջապես սովորական սառնասրտությունը դավաճանեց Արկադի Մ.-ին: Նա շրջվեց և գլուխն ափերի մեջ առած՝ նետվեց դեպի դուռը:
Ես մոտեցա նրան:
– Դուք դերասանուհի՞ եք,- հարցրեց:
– Ո՛չ, ո՛չ, ընդամենը դիմահարդար:
– Արվեստում աստիճաններ ու կոչումներ չկան,- կտրուկ ընդհատեց նա: Հետո ավելացրեց:- Բոլորս Ապոլոնի ստրուկներն ենք: Մեզնից յուրաքանչյուրը Նորին մեծություն կայսրուհի Մելպոմենի հպատակն է:
Որոշ ժամանակ խոսում էինք ամենանվիրականի մասին: Ամբողջ խոսակցությունը ենթատեքստով էր:

Արկադին քաղաքավարի թևանցուկ արեց ինձ: Կանանց նախանձող քշփշոցի ներքո ուղղվեցինք դեպի դուռը: Մեզ իր գիրկն առավ տեղացող ձյան համր նվազակցությունը…
Ինձ մոտ Արկադին իրեն նրբանկատ էր պահում, բայց՝ առանց կեղծ բարեպաշտության: Սկզբում նկարները նայեց: Հետո մի հզոր ակորդ առավ կլավեսինից՝ արժանին մատուցելով հմտորեն կազմված գրադարանին:
Ես հյուրին մի ըմպանակ լիկյոր առաջարկեցի: Մ.-ն մատների ծայրով քաղաքավարությամբ հետ մղեց:
– Չեմ խմում: Թատրոնն ինձ համար փոխարինում է գինուն: Հետնաբեմի նրբին բույրն ավելի թունդ է արբեցնում, քան թանկարժեք մուսկաթի գինին:
Նստել էինք կողք կողքի՝ զրուցելով, գրականությունից, կերպարվեստից, թատրոնից: Ապա ցավով հիշեցինք հանճարեղ նկարիչների, որ մահացել էին անհայտության ու չքավորության մեջ:
– Սե լյա վի,- անցնելով ֆրանսերենի՝ նկատեց Արկադին: Ու ես անսպասելիորեն ձեռքս հպեցի նրա այրվող ճակատին: Զիգմունդ Ֆրե՛յդ, ո՞ւր էիր այդ պահին… Կատարվեց այն, ինչից հույս ունեինք խուսափել…»:

Մայորը, պպզած, ճամպրուկն էր կողպում: Ռեժիսորն իրերն էր մոտեցնում դռանը: Գենան բարձրացնում էր կապոցներն ու տուփերը: Կամ ուժն էր փորձում, կամ կշռում բեռը: Լուռ էին, չնայած ակնհայտ թշնամանք էլ չէին զգում: Նույնիսկ ուրախանում էին շփման ամեն մի չնչին առիթով:
– Հլա պահի,- ասում էր մայորը, ու Լոսիկը հաճույքով հուպ էր տալիս ճամպրուկի կափարիչը:
– Կարելի՞ է ծխել,- հարցնում էր ռեժիսորը, ու Կուզմենկոն անմիջապես գրպանից հանում էր նորաձև կրակայրիչը…
– Մեքենան սպասում է,- ասաց Վարյան:
Մալինովսկին գրկել էր բուռն փարթամացած ֆիկուսով կաթսան:
Տանելու հարմար իրերը քիչ չէին. ճամպրուկներ, գրքեր, ազդեցիկ չափսի, բայց թեթև սպիտակեղենի կապոցներ… Մալինովսկին անիծում էր իրեն, որ հենց այդ նողկալի հրեշը՝ հողով լի արծնապատ տարողությունն ընտրեց:
Սկզբում ռեժիսորը քամահրանքով իրենից հեռու պարզած ձեռքերին էր տանում: Հետո հոգնեց: Երկու րոպե անց վատացավ: Էլի մի րոպեից զգաց՝ ուր որ է կաթվածահար կլինի:

Նրա հետևից Կուզմենկոն ու Լոսիկը քաշ էին տալիս սպասքապահարանը: Նեղ սանդղավանդակում խեղդուկ ձայնով շշնջում էին.
– Էդպե՛ս… Իմ կո՛ղմը… Զգո՛ւյշ… Ա՛ջ… Լա՛վ է…
Տղամարդիկ իրերը դարսեցին ասֆալտին: Դրանք խղճուկ տեսք ունեին: Պահարանն՝ առանց ապակիների: Մաշված ճամպրուկը չէր անդրադարձնում արևի ճառագայթները: Լոսիկը նկարները հենել էր պատին: Շրջոնքը կորած էր փոշու մեջ: Ժանգոտ մեխերից կախվել էին հանգուցավոր թոկերը:
«Հրաշալի կադր կլիներ,- մտածում էր ռեժիսորը:- Փողոցը, աղավնիները, տրամվայներն ու այդ իրերը՝ մայթին… Ա՛խ, մարդկային բարեկեցությունն ինչ հեշտ է վերածվում հնոտու կույտի…»:
Երեք տղամարդ բարձրանում էին վերև՝ արույրե ցուցանակներին կարդալով ծիծաղաշաժ ազգանունները. «Բլուդիկով, Զայաց, Կրոնշտեյն…»:
«Հավաքական կեղծանուն է հիշեցնում,- նկատեց ռեժիսորը,- թատերագիր Ալեքսանդր Կրոն-Շտեյն…»:
– Ինձ սառնարանն է անհանգստացնում,- ասաց Գենա Լոսիկը:

Առավոտները նա հեռագրեր էր բաժանում: Զանալով գրպանի փող վաստակել՝ ժամերով դեգերում էր բակերում: Նրա պատկերացմամբ՝ փողն ինչ-որ ձևով կապ ուներ կանանց հետ, իսկ կանայք Լոսիկին չափազանց էին հետաքրքրում: Նա սիրում էր խմբի բոլոր աղջիկներին: Ինստիտուտի բոլոր մեքենագրուհիներին: Նույնիսկ հավաքարարներին, որ կռացած՝ ցեմենտե հատակն էին լվանում: Սիրում էր բոլոր աղջիկներին, բացառությամբ ակնհայտ տգեղների, որոնք կանացի հավերժական պատերազմում անձնատուր եղած՝ որպես ստորացուցիչ կերպով հավասարներ լուծվում էին տղամարդկանց միջավայրում: Բայց նույնիսկ նրանց հետ Լոսիկը փոփոխամիտ խոստումնալից հարաբերություններ էր ունենում: Մի անգամ Գենան ծխում էր ինստիտուտի երկու մասնաշենքերը միացնող պուրակում: Կողքին մի աղջիկ ինչ-որ բան էր սերտում: Հագին մաշված սև բոկոտիկներ էին: Աղջկա հույլ դեմքը, աղքատիկ սանրվածքը, լվանալուց մաշված դպրոցական զգեստը, կրծած եղունգները միանգամայն հիասթափեցրին Գենային: Հանկարծ աղջիկը շրջվեց ու ծալելով նրա վերնաշապիկի թեզանիքը՝ նայեց ժամացույցին: Հետո նորից խորացավ Ֆիխտենհոլցի դասագրքի մեջ: Բայց այդ վայրկյանից Գենան նրան էլ էր սիրում: Առավոտյան, սառած ձեռքերը վերարկուի գրպանները խրած, Գենան հեռագրեր

է բաժանում: Նրան փող է պետք: Ու ոչ թե նրա համար, որ տղայի կարծիքով՝ սերը գնում են փողով, այլ նրա՝ որ փողն ու սերը հանելուկային կերպով կապված են նրա պատկերացումներում: Ինչպես լույսն ու ջերմությունը, ինչպես գիշերն ու լռությունը… Համենայնդեպս, Գենան սպասում է, որ սերն ու փողը կհայտնվեն միանգամից, միասին և մեկընդմիշտ:
Նա կարդում է ազգանունները, սեղմում մուտքի դռան զանգի բազմագույն կոճակները, պարզում ճմռթված թղթերը: Հետո տառապանքով ընդունում թեյավճարը: Մետաղադրամները հատ-հատ զնգում են նրա հպարտության հատակին:
Քանի դեռ Վարյան կարդում էր հեռագիրը. «…հրեշտակի օրը… առողջություն… երջանկություն», Գենան աննկատ զննում էր նրան:
– Դու սառել ես ու թեյ ես ուզում,- ասաց Վարյան:
Զուգարանակոնքի հեռավոր քրթմնջոցի ներքո Գենան գնում էր մգդակած խալաթի ետևից: Պաստառների խունացած վարդերի կողքով, դռների մոտով, որոնցից անդին թագավորում էին շրշյուններն ու հետաքրքրասիրությունը: Նրանք թեյ էին խմում, զրուցում էին. «Մորից հարազատ մարդ չկա…»: Լոսիկը շուտ-շուտ վեր էր թռչում, գրպանից հանում թաշկինակը: Վարյան խալաթն էր շտկում: Գենան կարմրում էր՝ ցնցվելով թեյի գդալի զնգոցից… Կամաց-կամաց հարմարվեց…
– Մեր մոտ՝ ԼԻՏՄՕ-ում, մի դեպք պատահեց: Կլիենտներից մեկին,- պատմում էր Գենան,- հեռացրին հարբեցողության համար: Մի տարի արտադրությունում էր բանում: Հետո եկավ դեկանի մոտ, ավելի ճիշտ՝ դեկանի տեղակալի: Ու դեկանի տեղակալն ասում է. «Ես քո վրա խաչ եմ քաշել: Ուրեմն քո խաչքավորն եմ…»: Ծիծաղելի է, չէ՞
– Շա՛տ,- ասաց Վարյան:
Մի քանի րոպե անց Գենան հրաժեշտ տվեց ու դուրս եկավ: Նրան դիմավորեց աշնան աղքատիկ արևով թեթևակի ներկված փողոցը:

Վերա Զվյագինայի երկնագույն օրագրից
«Եվ, համենայնդեպս, ի՛մ ժամանակակից, կյանքը սքանչելի է: Եվ կյանքում սխրանքը տեղ ունի, ունի՛: Ես զգում էի դա մի լավ տղայի միամիտ կարճատես աչքերի խորքը նայելիս: Փոստատար աղավնու պես նա ներս թռավ իմ ցուրտ խցի օդանցքից…

Խոսում էինք մանր-մունր բաներից, գրքերից, ամբողջ խոսակցությունը ենթատեքստով էր:
Նայում էր ինձ: Զգում էի՝ երեխան տղամարդ է դառնում: Էլի մի վայրկյան՝ ու բուռն խոստովանություն կլսեմ: Օ՛, Զիգմունդ Ֆրեյդը դա տեսնելով՝ կթռչկոտեր ուրախությունից… Եվ այստեղ ինձ շշնջացի.
«Երբե՛ք: Այս տղան չի տեսնի կյանքի դաժան դարձերեսը: Երեսպաշտության զոհ չի՛ դառնա: Չի զգա այս աշխարհի ողջ ստորությունը»:
Ես վեր կացա ու բացեցի դուռը: Կլավեսինի հղկած կողին առկայծեց իմ անդրադարձումը:
Պատանին տրտում նայեց ինձ, կտրուկ շրջվեց, ու քիչ անց լսեցի արագ ոտնաձայնն աստիճաններին:
Խաղաղվելու համար ստիպված երկար թերթեցի Վան Գոգի վերատպությունների ալբոմը:
Մենք խուսափեցինք նրանից, ինչն անխուսափելիորեն պիտի կատարվեր…»:

Մայթին բլրացել էր իրերի կույտը: Ֆիկուսը կահույքի արանքում կանաչին էր տալիս ինչպես բարդին՝ նորակառույցների շրջանում: Մայորն ու ռեժիսորը ծխում էին գարեջրի կրպակի ստվերում: Լոսիկը, պպզած, հարավսալավական ամսագիր էր թերթում:
– Այսպե՞ս,- ասաց Վարյան,- գնամ նայեմ…
Նա, սառը բազրիքներին հպվելով, բարձրացավ վերև: Նայեց նախասենյակի պատերին: Մտովի հրաժեշտ տվեց բոլոր ճաքերին: Կտրեց նեղ, մանկական խաղալիքներով, հեծանիվով, լագանով, սնդուկներով, ավերակ ու անտեր պահարանով խրկված միջանցքը: Հայտնվեց սենյակում, որն անսպասելիորեն ընդարձակ ու լուսավոր էր, ինչպես սառցադաշտը: Հատակին դեղասրվակներ էին թափված, ձայնասկավառակի բեկորներ, մի քանի ճմռթած թուղթ ու մի կտոր մգացած շաքար…
Նա լվացվեց ու, առանց դիմաներկի, հանկարծ ջահելացավ:
Հետո փակեց դուռն ու հեռացավ առանց հետ նայելու:
Այն ժամն էր, երբ նոր-նոր է սկսում մթնել, իսկ մեքենաների լուսարձակներն արդեն վառվում են: Իրերը շարված էին բեռնատարի կողքին՝ աննպատակ ու խառնիխուռք՝ ռազմավարի պես: Միայն թե շքեղությունն էր պակասում:
Նույնիսկ արտասահմանյան, ողորկ, բազմաբղետ փողոցն արտացոլող կահույքը

ձանձրույթ էր բերում:
Մալինովսկին, կաշեպատ աթոռակին նստած, միտք էր անում.
«Տեղափոխությունն աղետալիորեն արժեզրկում է իրերը: Տեղափոխվելիս են ասում՝ փետեղեն ու ման-չման, ու հոգիդ մրսում է»:
Կուզմենկոն հանկարծ անհանգիստ իրար եկավ ու Մալինովսկուն ասաց.
– Կյանքի մասին ֆիլմերը քիչ են:
– Չհասկացա:
– Ասում եմ՝ լավ նկարները քիչ են: Մի քանի օր առաջ մեկը նայեցի. տղամարդը տուն ունի, կինն էլ տուն ունի, պահարան, բազմոց, հայելու սեղանիկ… Ու բոլորը դժգոհ են… Մի գլուխ՝ լա՛-լա՛-լա՛, լա՛-լա՛-լա՛…
– Չեմ նայել: Լավ ու վատ ասել չեմ կարող,- պատասխանեց Մալինովսկին,- կարծում եմ՝ ֆիլմում կարող էին ուրիշ հարցեր շոշափված լինել… էթիկական բնույթի…
– Մեր մոտ՝ ԼԻՏՄՕ-ում մի դեպք պատահեց,- ընդհատեց Գենան,- կլիենտներից մեկը գծագրությունից քննություն էր տալիս: Դոցենտ Յուդովիչը լսեց-լսեց ու օրորեց գլուխը: «Վատ է, Սադի՛կով, երկո՛ւ»: Իսկ Վիտկա Սադիկովը կռանում է սեղանին ու դոցենտին կամաց ասում. «Երեք դրեք»: Ծիծաղելի է, չէ՞:
– Զվարճալի է,- ասաց Մալինովսկին:
– Գիտությունը լույս է,- անփույթ արտահայտվեց Կուզմենկոն:
Վարյան արթնացրեց վարորդին: Նա չուզելով ոտք արեց կողի վրայով ու հայտնվեց մեքենայի թափքում:
– Հե՛յ, տվեք տեսնեմ,- ասաց նա՝ հառնելով բոլորի գլխավերևում:
Եվ Մալինովսկին անմիջապես, հիպնոսվածի նման, ճանկեց էմալապատ կաթսայի ունկերը:
– Տեղը դիր,- հրամայեց վարորդը,- թախտն ու պահարանը տվեք:
Նա խոշոր իրերը դասավորեց թափքակողերի երկայնքով ու գրքերը վարպետորեն խցկեց արանքները: Հայելին բարձերով բարուրելով՝ խցիկի ու պահարանի արանքը դրեց բազմոցի գլանիկը: Հետո ծույլ-ծույլ ցատկեց ասֆալտին ու զննեց պատկառելի չափերի դզոտը, ավելի ճիշտ՝ բարիկադը: Գիշերալամպը ճոճվում էր դրոշի պես…
Վարյան երրորդ փորձից փակեց դուռը: Նայեց հին տանը: Ամբողջովին առավ հայացքի մեջ: Ծռված ալեհավաքից մինչև սանդղամուտի քառթ-քառթ աստիճանները: Բակի հեռավոր անկյուններից մինչև բերանները թանգիֆով

կապած բանկաները՝ պատուհանագոգին: Դեղին ավազափոսում մոռացված խաղալիքներից մինչև այդ պահը՝ բեռնատարի խցիկում:
Հետո ասաց.
– Լա՛վ, գնացի՛նք:
Մեքենան շարժվեց: Մալինովսկին, Կուզմենկոն ու Լոսիկը թեթևացած շունչ քաշեցին: Կողքից սահեցին ծառերը, ցուցանակները, գունզգույն պատուհանները…
Կենտրոնը անցան: Ինչպես ջերմանավի տախտակամածից՝ նայեցին Նևային: Ու շուտով հայտնվեցին միջանցիկ քամիներից փշաքաղված նորակառույցների շրջանում:
– Էս ապրելու տեղ չի,- գոչեց Կուզմենոկոն,- շենքերը լրիվ իրար նման են, խմած եղար՝ կմոլորվես:
– Քամի՛ է: Չե՛մ լսում,- արձագանքեց Մալինովսկին:
– Ասում եմ՝ հարբած՝ ճամփան չես գտնի…
– Չե՛մ լսում:
– Խմած, ասում եմ, տուն ես գալիս…
– Հա՛:
Լոսիկն ուզում էր երգել: Ձիլ սուլեց:
Ձեռքդ պարզեիր՝ կդիպչեր լուսակրին:
Վերջապես մեքենան արգելակեց ծոմռված ծածկով նեղ շքամուտքի մոտ:
Վարորդը դուրս եկավ խցիկից, իջեցրեց թափքակողը: Տղամարդիկ ցատկեցին սիզամարգի վրա:
Հետո դատարկեցին իրերը, բարձրացրին մաքուր սանդուղքներով… Մթնեց…
Վառվեցին նոսրաշար կորամեջք լապտերները: Աստղերը երկնքում խունացան, կորցրին պայծառությունը: Մի հեռավոր էլեկտրաքարշ շչաց:
Կուզմենկոն սեղանին թերթ փռեց ու կանգնեց վրան: Շուտով թույլ-թույլ վառվեց ոլորած լարից կախված լամպը:

Հետո լվացվեցին ցնցուղարանում: Վարյան բացեց սպիտակեղենի կապոցն ու սրբիչ հանեց: Քիչ անց սրբիչն արդեն լրիվ թաց էր:
– Տղանե՛ր,- ասաց Վարյան,- մի քանի րոպեով դուրս գամ…
– Ո՞ւր,- հարցրեց մայորը:
– Ասեցի, չէ՞, դրա փողը պահել եմ…

– Իմ մոտ էլ կա: Ըհը՛: Չի հերիքի՞:
– Ես էլ եմ ուզում մասնակցել ծախսերին,- հայտարարեց Մալինովսկին,- ալկոհոլի հանդեպ ակնածանք չունեմ, բայց… Ահա, վեց ռուբլի:
Լոսիկը կարմրեց:
– Ջահելը կգնա,- ասաց Կուզմենկոն:- Կգնա՞ս, չէ՞, ջահե՛լ:
«Երբ եմ վերջապես բոլորիցդ մեծ լինելու»,- մտածեց Գենա Լոսիկը:

Գենան վերադարձավ: Գրպաններն ուռած էին: Սեղանին արդեն ճերմակին էին տալիս ափսեները: Մոխրամանը լեփ-լեցուն էր ծխուկներով: Վարյան պահարանի դռնով պաշտպանված՝ հագուստն էր փոխում: Հայտնվեց անպաճույճ կանաչ կոստյումով: Հարթ սանրվածքը կոկոն էր հիշեցնում:

Մայորը, ծնկներով սեղմած, բացեց շշերը: Վարյան երշիկ կտրտեց, հետո հանեց բաժակները: Բաժակներն առանձին-առանձին փաթաթված էին թերթի թղթով: Քանի դեռ օղին էին լցնում, սովորական ռուսական լռություն էր:
– Բնակարանամուտդ շնորհավոր,- հայտարարեց մայորը:
Վարյան կարմրեց ու անպատեհ ասաց.
– Ձերն էլ:
Իսկ հետո լաց եղավ, և արդեն դժվարությամբ լսվեց.
– Ես ձեզնից բացի ոչ ոք չունեմ…
Խմում էին առանց շտապելու: Հանկարծ պարզվեց, որ արդեն լուսամուտի գոգին ինչ-որ բանկաներ են հայտնվել: Բազմոցը ծածկված էր վառվռուն կտորով: Պահարանի ապակիների հետևն ինչ-որ զիգի-բիզիներ էին:
– Կյանքի մասին ֆիլմերը քիչ են,- ասում էր մայորը:- Նայում ես՝ էնքան պրոբլեմ կա… Մի փաստ բերեմ… Բնակչուհիներից մեկը աղբը տարել էր թափի… Հայտնվեց անհայտ կողոպտիչը… Առավ դույլն ու էն գնալն էր, որ գնաց… Ինչի՞ է կինոն էստեսակ փաստերն անտեսում:
– Թույլ տվեք,- ասում էր Մալինովսկին,- չէ՞ որ արվեստը պարզապես չի պատճենում կյանքը՝ նրա կենցաղային համարժեքը ստեղծելով… Ավելին, իսկության մակարդակում կյանքը վերարտադրելու փորձերը խանգարում են հանդիսատեսի և պատկերվող իրականության առնչմանը:
– Դուք գիտե՞ք ինչ է իսկությունը,- մայորի կողմը թեքվելով՝ ընդհատում էր Գենա Լոսիկը:

– Հաց կեր,- ասում էր Կուզմենկոն,- որ խմում ես, կեր, ջահե՛լ, թե չէ արդեն…
– Եթե իրականությունն անմիջականորեն ձևավորվում է որպես գեղագիտական զգացմունքի առարկա,- ասում էր Մալինովսկին,- հանդիսատեսը վերածվում է ֆիլմի համահեղինակի: Արվեստը կյանքից ճշմարիտ է, եթե կուզեք…
– Ափսո՜ս, Լենինը չկա,- մղկտում էր Կուզմենկոն:
– Մի՛ կռվեք,- խնդրեց Վարյան ,- այնքան լավ օր է…
– Այ էսպիսի մի պատմություն էլ եղավ,- ասաց Գենկան,- կլիենտներից մեկը՝ Յաշկա Բարանովը, նկատել էր, որ ամբիոնի մոտ կանգնած դոցենտ Ֆալկովիչը դասախասություն կարդալիս հաբ կուլ տվեց: Ու ասում է. «Ռէ՛մ Աբրամովիչ, իսկ եթե դրանք տարիներով նստում-մնում են ստամոքսում ու չեն հալվո՞ւմ»:
– Սարսափելի՜ է,- ասաց Վարյան:- Թեյ կուզե՞ք: Առանց քաղցրի…

Տղամարդիկ իջան ներքև: Հետո պատերի տակով անցան՝ ոտք անելով սիգամարգը շրջանակած խողովակների վրայից:
Վարյան երկար կանգնել էր պատշգամբում: Տղամարդիկ նրան չէին տեսնում. մութ էր: Միայն Լոսիկն էր պտտում գլուխը…
Հիմա նրանք ընդմիշտ կբաժանվեն: Եվ գուցե իրենց հեռավոր օջախները տանեն մի բան, որ այնտեղ կապրի ընդմիշտ:
Տղամարդիկ մոռանում էին իրար՝ հոգնած ու տարբեր՝ ինչպես նորակոչիկները ծանր արգելավազքից հետո… Վերադառնում ես ծանոթ ճանապարհով:
Չարչարանքն անցյալում է: Հակագազը ճռճվում է: Թույլատրված է ծխել:
Գնդապետը գալիս է մեքենայի թափքում, նրա հետ քաղդեկն ու բուժակն են:
Եվ այստեղ շարքի առջևում հայտնվում է նախերգիչը: Երգը ուժգնանում է:
Քայլերգ է պահանջում:
Եվ բոլորին արդեն պարզ է՝ ինչ վաղո՜ւց ես երգում այդ հին հիմները՝ եղբայրներիդ, ոչ թե քո մասին: